ԿԱՐԾԻՔ

Սյուզաննա Արմենի Պետրոսյանի «Նոր մետաքսի ճանապարհը և Հայաստանի միջազգային տրանսպորտային միջանցքների զարգացման խնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տրանսպորտը հանդիսանում է ցանկացած երկրի տնտեսության զարգացման կարևորագույն ոլորտներից մեկը: Արդի պայմաններում, գլոբալիզացիոն գործընթացներով պայմանավորված, երբ պետությունների միջև շարունակ ընդլայնվում են տնտեսական, առևտրային հարաբերությունները, կենսական նշանակություն ունի երկրի տարանցիկ տրանսպորտային ուղիների ինտեգրումը միջազգային տրանսպորտային համակարգին:

Հայաստանի համար, որը չունի անմիջական ելք դեպի ծով և որի միջսահմանային տրանսպորտային հաղորդակցության ուղիները չեն գործում հարևան 2 երկրների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ, իսկ Վրաստանի հետ գործում են ոչ մեծ արդյունավետությամբ, ռազմավարական նշանակություն ունի տրանսպորտային ուղիների զարգացումը, ընդլայնումն ու արդյունավետ կառավարումը:

Թեկնածուական ատենախոսության թեման, որը նվիրված է ՀՀ տրանսպորտային համակարգում առկա հիմնախնդիրների ուսումնասիրությանը, տրանսպորտային, լոգիստիկական ենթակառուցվածքների ու տարանցիկ տրանսպորտային ուղիների (միջանցքների) զարգացման արդյունավետ ուղիների որոնմանը, ներկայումս ՀՀ տնտեսության ընդհանուր զարգացման կարևորագույն խնդիրներից մեկն է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակը «Նոր մետաքսի ճանապարհ» մեգածրագրին ՀՀ տարանցիկ տրանսպորտային ուղիների (միջանցքների) ինտեգրման հիմնախնդիրների բացահայտումն ու լուծման ուղիների ներկայացումն է, որը կնպաստի ՀՀ որպես տարանցիկ երկրի կայացմանը և տնտեսության զարգացմանը:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

❖ ուսումնասիրել տրանսպորտի ոլորտի դերն ու նշանակությունը երկրի տնտեսության արդյունավետության և մրցունակության բարձրացման համատեքստում,

❖ վերլուծել տրանսպորտի ոլորտի զարգացման ուղիները տնտեսապես զարգացած և հարևան երկրներում,

❖ ՀՀ տրանսպորտի ոլորտի գործունեության վերլուծության արդյունքում բացահայտել առկա հիմնախնդիրները՝ պայմանավորված երկրի միջազգային տարանցիկ ուղիների զարգացման հետ,

❖ ՀՀ տրանսպորտի ոլորտի գործունեության վերլուծության արդյունքում բացահայտել առկա հիմնախնդիրները՝ պայմանավորված երկրի միջազգային տարանցիկ ուղիների՝ միջազգային տրանսպորտային ուղիներին ինտեգրման հետ:

❖ վերլուծել «Հյուսիս-հարավ» տրանսպորտային միջանցքի հիմնական և այլընտրանքային ուղիներն ու գնահատել դրանց տնտեսական նպատակահարմարությունը,

❖ վերլուծել «Հարավ-Արևմուտք» միջազգային տրանսպորտային միջանցքի այլընտրանքային ուղիներն ու գնահատել դրանց տնտեսական նպատակահարմարությունը,

❖ գնահատել «Նոր մետաքսի ճանապարհի» «Հարավ-Արևմուտք» և «Հարավ-Հյուսիս» միջազգային տրանսպորտային ուղիներին Հայաստանի մասնակցության տնտեսական նպատակահարմարությունը,

❖ հիմնավորել տրանսպորտի ոլորտի և միջազգային տարանցիկ ուղիների (միջանցքների) զարգացման անհրաժեշտությունը ՀՀ տնտեսության արդյունավետ ու մրցունակ գործունեության ապահովման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսությունում ստացված գիտական արդյունքներից կարելի է առանձնացնել գիտական նորույթ պարունակող հետևյալ հիմնադրույթները.

- Հիմնավորվել է ՀՀ միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների զարգացման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա ինտեգրվելու միջազգային տրանսպորտային ուղիներին և օգտագործելու միջազգային տարանցիկ բեռնաշրջանառության ծավալի մեծացման ու երկրի տնտեսության զարգացման ոլորտում առկա ռեսուրսները:
- Կատարվել է «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի գործող և հնարավոր այլընտրանքային տրանսպորտային ուղիների վերլուծություն, գնահատվել է դրանց արդյունավետությունն ու ՀՀ մասնակցության տնտեսական նպատակահարմարությունը:

- Մշակվել է «Հարավ-Արևմուտք» տրանսպորտային միջանցքը ձևավորող հնարավոր այլընտրանքային ուղիների կազմը և հիմնավորվել ՀՀ մասնակցության տնտեսական նպատակահարմարությունը:
- Հիմնավորվել է «Իրան – Հայաստան – Վրաստան – ԵՄ երկրներ» տարանցիկ երկաթուղային տրանսպորտային ուղու տնտեսական նպատակահարմարությունը, որը շահեկան ռազմավարական նշանակություն կունենա ՀՀ համար և կնպաստի տնտեսության արդյունավետության ու մրցունակության բարձրացմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 122 էջի վրա (առանց հավելվածի):

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված գիտական նորույթները, գիտագործնական և կիրառական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Տրանսպորտի ոլորտի առաջանցիկ զարգացումը որպես երկրի տնտեսության զարգացման գործոն» գլխում ներկայացվել են մասնագիտական գրականության մեջ ատենախոսության թեմայի շրջանակներում ուսումնասիրվող հիմնահարցի շուրջ առկա մոտեցումները, ուսումնասիրվել է տրանսպորտի ոլորտի էությունը, զարգացման կարևորությունը երկրի տնտեսության արդյունավետության ու մրցունակության բարձրացման առումով: Կատարվել է ոլորտի զարգացման ուղիների վերլուծությունը տնտեսապես զարգացած, հարևան երկրներում, ոլորտի գործունեության վերլուծությունը և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում:

Ատենախոսության երկրորդ՝ «Միջազգային տարանցիկ ուղիների (միջանցքների) զարգացումը որպես երկրի տնտեսության զարգացման ուղղություն» գլխում ատենախոսը կատարել է միջազգային տրանսպորտային միջանցքների կառավարման համակարգի, ՀՀ տարանցիկ տրանսպորտային ուղիների գործունեության վերլուծությունը, ներկայացրել արդի խոշորագույն տրանսպորտային ծրագրերից մեկը՝ «Նոր մետաքսի ճանապարհը», վերջինիս զարգացման արդի միտումները:

Ատենախոսության երրորդ՝ «Նոր մետաքսի ճանապարհը» և միջազգային տարանցիկ ուղիներին ՀՀ մասնակցության տնտեսական նպատակահարմարության գնահատումը» գլխում կատարվել է «Նոր մետաքսի ճանապարհի» հետ

փոխկապակցված գործող և ձևավորվող այլընտրանքային՝ «Հյուսիս-Հարավ», «Հարավ-Արևմուտք» միջազգային տարանցիկ ուղիների վերլուծությունը, հիմնավորվել է վերջինիս՝ ՀՀ մասնակցության և Հայաստանի տարածքում տարանցիկ երկաթուղային տրանսպորտային ուղու (Իրան – Հայաստան – Վրաստան – ԵՄ երկրներ) կառուցման տնտեսական նպատակահարմարությունը:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ի մի են բերվել հետազոտության հիմնական արդյունքները, և ներկայացվել են եզրահանգումներն ու հիմնական առաջարկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդյունքները կարող են գործնական կիրառություն ունենալ ՀՀ Կառավարության՝ Տրանսպորտի ոլորտին առնչվող քաղաքականության կատարելագործման գործընթացում, ինչպես նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից՝ երկրի տրանսպորտային համակարգի զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակման ժամանակ:

Ատենախոսության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ նաև «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից ՀՀ երկաթուղային ցանցի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման համար:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության Գծապատկեր 2.1-ի (էջ 55) և Աղյուսակ 2.4-ի (էջ 75) տվյալները (չափման միավորները) և վերլուծությունը ճշգրտման կարիք ունեն, մասնավորապես՝ 2022 թվականին համաշխարհային արտահանումը չի կարող կազմել 24,5 մլրդ ԱՄՆ դոլար, կամ Չինաստանի ընդհանուր արտահանումը 2022 թվականին 3,59 մլրդ ԱՄՆ դոլար չէ:
2. Ատենախոսության 61-րդ և 66-րդ էջերում Հեղինակը հայտնում է այն միտքը, որ Բաքու-Մեղրի-Ջուլֆա-Երասխ-Գյումրի-Կարս երկաթուղային միջանցքը շահեկան է տարածաշրջանի բոլոր երկրների համար և ըստ էության՝ արդարացված է համարում Երասխ-Նախիջևան՝ 1 կմ և Մեղրիի հատվածում՝ 38 կմ երկարությամբ երկաթգծի շինարարության համար անհրաժեշտ 210 մլն ԱՄՆ դոլարի կատարվելիք ներդրումների նախագիծը: Սա այն դեպքում, երբ տնտեսապես առավել նպատակահարմար է շահագործել և ներդրումներ կատարել Նախիջևան-Երևան-Իջևան-Ղազախ-Բաքու երթուղու ուղղությամբ, որը կարելի է Ֆիոլետովո-Վանաձոր նոր երկաթուղու կառուցման պարագայում միաժամանակ ապահովել

Գյումրի-Կարս երկաթուղու վերագործարկումը: Այս տարբերակը՝ Արևելք-արևմուտք երկաթուղային միջանցքի ամենակարճ տարբերակն է, միաժամանակ Հայաստանի տարածքով երկաթուղային բեռնափոխադրումների ծառայությունների համար ավելի շատ գումարներ կգանձվեն, ինչը կապահովի հայաստանյան ներդրումների ավելի արագ ետվերադարձ:

3. Ատենախոսության 3-րդ և 4-րդ գիտական նորույթների բովանդակությունը գրեթե նույնն է, քանի որ դրանք հիմնականում ընդգրկում են Սյունիքով Իրանի հետ նոր երկաթուղու կառուցման գաղափարի հիմնավորումը: Հետևաբար, առաջարկվում է այս երկու նորույթների փոխարեն նորը վերաձևակերպել, մասնավորապես՝ տնտեսամաթեմատիկական հաշվարկների միջոցով հիմնավորվել է Հայաստան-Իրան նոր երկաթուղու կառուցման տնտեսական և ռազմավարական նպատակահարմարությունը:
4. Հեղինակի կողմից Ագարակ-Երասխ երկաթուղու կառուցման (236կմ) հաշվարկների հիմքում դրվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի երկարությունը: Առհասարակ, երկաթուղու կառուցման տեղանքի և աշխարհագրության այլ տեխնիկական պահանջներ կան, հետևաբար, այն չի կարող ամբողջությամբ նույնացվել ճանապարհային նախագծի հետ, արդյո՞ք Երասխով՝ սահմանին շատ մոտ երկաթուղու կառուցման անվտանգային բավարար երաշխիքներ կան: Բացի այդ, Աշխատանքում բավարար չի ուսումնասիրվել և գնահատվել «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ-ի կողմից մշակված Ագարակ-Գագարին երկաթուղու կառուցման նախագծի տեխնիկատնտեսական նպատակահարմարությունը, որը Հեղինակի կողմից առաջարկվող Ագարակ-Երասխ երկաթուղու կառուցման նախագծի առաջարկվող այլընտրանքն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արդյունքներն ու արժանիքները: Սյուզաննա Արմենի Պետրոսյանի ատենախոսությունն ունի արդի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն, տրամաբանական կառուցվածքով, ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են ՀՀ և տարածաշրջանային տարանցիկ տրանսպորտային ուղիների (միջանցքների) ինտեգրման համար կարևորագույն խնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 4 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրու-

թյան բովանդակությանը և արտացոլում աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Սյուզաննա Արմենի Պետրոսյանի «Նոր մետաքսի ճանապարհը և Հայաստանի միջազգային տրանսպորտային միջանցքների զարգացման խնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ — Ս. Հ. Պարսյան

02.12.2024թ.

Պարոն Ս. Հ. Պարսյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար՝ — Ն. Հ. Դարբինյան